# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր
համայնք, ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գեղադիր, 4 փ. 4 շ., Հեռ. (094)
248414 , geghadir.kotayq@mta.gov.am

N 145
*08 հունիս 2020թ.*

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ,

<<Տեղական ինքնակառավարման մասին >>օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ է ուղարկվում Կոտայքի մարզի Գեղադիր համայնքի ղեկավարի 2020թվականի հունիսի 1-ի N37-Ա որոշումը:

Առդիր 2 թերթ:

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Թ. Մուրդյան*
*Հեռ. 077161037*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 հունիսի 2020թվականի N 37-Ա

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10,11,13 կետերի պահանջներով. հիմք ընդունելով Հմայակ Մկրտչյանին պատկանող Կոտայքի մարզի Գեղադիր համայնքի 1-ին փողոցի 12/1հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 199,96քմ արտաքին մակերեսով հասարակական շինության և 99.98 քմ մակերեսով բնակելի տան օրինականացման դիմումը և այն,որ ըստ համայնքի կադաստրային քարտեզի և տեղում կատարած ուսումնասիրության հողամասը ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված ցանկում,ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը,շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում ,կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով,չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝որոշում եմ.

1.Հմայակ Մկրտչյանին պատկանող Կոտայքի մարզի Գեղադիր համայնքի 1-ին փողոցի 12/1 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված շինությունը համարել օրինական:
2.Սահմանել,որ սեփականատերը պարտավոր է՝
սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Գեղադիր համայնքի բյուջեի 900105208210 հաշվի համարին վճարել
99,98 X1100 =109 978 ՀՀ դրամ և 199.96X2200 =439 912 ՀՀ դրամ.
ընդամենը 549 890(հինգ հարյուր քառասունինն հազար ութ հարյուր իննսուն )
ՀՀ դրամ:

3.Սահմանել,որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարում չկատարելու դեպքում ,նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման , իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը, կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Թամար մուդոյանը:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հմայակ Մկրտչյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ

2020 թ. հունիսի 1
գ.Գեղադիր